ԵԴ1/0048/13/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Շիրակի մարզի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Ս.Անդրեասյան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ռ.Պապոյան

22 օգոստոսի 2025 թվական քՍերևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը:

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2012 թվականի մայիսի 21-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի անմեղությունը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում:

Ամբաստանյալ Արայիկ Վաղարշակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի՝ 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն, ամբաստանյալ Արայիկ Վաղարշակյանն ազատվել է նշանակված պատժից:

Արայիկ Վաղարշակյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, վերացվել է:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ ամբաստանյալ Արամ Միքայելյանի պաշտպանի և մեղադրողի վերաքննիչ բողոքները մերժվել են, Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2012 թվականի մայիսի 21-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և ամբաստանյալ Ա.Մելիքյանի պաշտպանի վճռաբեկ բողոքները բավարարվել են մասնակիորեն: Ամբաստանյալներ Արամ Միքայելյանի և Արայիկ Վաղարշակյանի վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2012 թվականի մայիսի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշումը

բեկանվել են և գործն ուղարկվել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 6-ի դատավճռով (այսուհետ՝ նաև Դատավճիռ) Արայիկ Վաղարշակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներ կատարելու մեջ և դատապարտվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով, նույն օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն, հանցանքների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Վաղարշակյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Արայիկ Վաղարշակյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի մարտի 3-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Միքայելյանի պաշտպանի և ամբաստանյալ Ա.Վաղարշակյանի պաշտպանի վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վերաքննիչ բողոքը՝ բավարարվել:

Նույն որոշմամբ ամբաստանյալ Ա.Վաղարշակյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով լրացուցիչ պատիժ է նշանակվել գույքի բռնագրավում՝ անձնական գույքի կեսի չափով, բայց ոչ ավելի՝ քան 19.471.815 ՀՀ դրամից:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի մարտի 3-ի որոշումն օրինական ուժի մեջ է մտել 2014 թվականի ապրիլի 4-ին, այսինքն, նույն օրն ուժի մեջ է մտել նաև Դատավճիռը:

3.1. Դատավճռի կատարման ընթացքում պարզվել է, որ դատապարտյալ Արայիկ Վաղարշակյանը բացակայում է բնակության վայրից, և Արագածոտնի մարզի

ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Ա.Վաղարշակյանը հայտնաբերվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում և 2023 թվականի մարտի 30-ից գտնվել արգելանքի տակ:

2024 թվականի փետրվարի 13-ին Ա.Վաղարշակյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն և պատիժ է կրել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման բաժանմունքի պետի՝ 2024 թվականի մարտի 13-ի տեղեկանքի համաձայն՝ դատապարտյալ Արայիկ Վաղարշակյանը 2024 թվականի մարտի 1-ից պատիժ է կրում «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում:

4. 2024 թվականի փետրվարի 19-ին դատապարտյալ Ա.Վաղարշակյանի պաշտպան Վ.Հովհաննիսյանը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով Ա.Վաղարշակյանին պատժից ազատելու վերաբերյալ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի մարտի 13-ի որոշմամբ, դատական վարույթը, ըստ տարածքային ընդդատության, ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Վաղարշակյանի պաշտպան Վ.Հովհաննիսյանի միջնորդությունը մերժվել է:

5. Առաջին ատյանի դատարանի նշված որոշման դեմ դատապարտյալ Ա.Վաղարշակյանի պաշտպան Վ.Հովհաննիսյանի կողմից բերվել է հատուկ վերանայման վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ դատապարտյալ Ա.Վաղարշակյանն ազատվել է դատավճռով նշանակված պատժի հետագա կրումից՝ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

7. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են վարույթի ելքի վրա:

Բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել 2021 թվականի մայիս 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ գործող քրեական օրենսգիրք) 8-րդ, 9-րդ հոդվածների, 90-րդ հոդվածի 1-ին մասի և 5-րդ մասի դրույթները, ինչպես նաև ստորադաս դատարանի որոշումը հակասում է *Վանիկ Առուստամյանի* գործով 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ ԼԴ/0004/12/22 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Բողոքաբերը նշել է, որ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցած լինելու հետևանքով պատժից ազատելը՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժից ազատելու տեսակներից մեկն է: Որպես պատժից ազատելու ինքնուրույն տեսակ, այն կրում է բացառապես նյութաիրավական բնույթ և դրա գործադրման համար անհրաժեշտ հիմքերն ու պայմանները սահմանված են միմիայն քրեական օրենսդրությամբ: Հետևաբար՝ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցած լինելու հետևանքով պատժից ազատելու հարցը՝ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողությանը վերաբերելի կարգավորումների համատեքստում քննարկելիս, պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված վերաբերելի իրավակարգավորումները:

7.1. Բողոք բերած անձն ընդգծել է, որ դատական ակտի կատարման ընթացքում՝ դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ, դատապարտյալ Ա.Վաղարշակյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Վերջինս հայտնաբերվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում և 2023 թվականի

մարտի 30-ից գտնվել է արգելանքի տակ: Հայտնաբերման պահին՝ 2023 թվականի մարտի 30-ի դրությամբ, դատավճիռն ի կատար չի ածվել 8 տարի 8 ամիս 27 օր, դատավճռի կատարման վաղեմության ժամկետի ընթացքը չի ընդհատվել:

Հանցանքի կատարման պահին գործող՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածով ամրագրված իրավակարգավորումների համաձայն՝ վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե դատապարտյալը խուսափում է պատիժը կրելուց: Ընդ որում, մեղադրական դատավճիռը չի կարող ի կատար ածվել, եթե ծանր հանցագործության համար դատավճիռը կայացնելու պահից անցել է քսան տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ: Տվյալ դեպքում՝ Արայիկ Վաղարշակյանը խուսափել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատիժը կրելուց, վաղեմության ժամկետն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ, սակայն չի լրացել վաղեմության ժամկետի կիրառման պարտադիր պայման հանդիսացող 20 տարին:

7.2. Բողոքաբերը եզրահանգել է, որ ստորադաս դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հիմքով պատժից ազատելու իրավակարգավորումները՝ որպես անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրություն, կիրառելի են միայն օրենքով նախատեսված դեպքերում, ինչը խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը և չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը:

8. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ի որոշումը բեկանել՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 27-ի որոշմանը:

<u>Վճռաբեկ բողոքի պատասխանը</u>.

9. Ա.Վաղարշակյանի պաշտպան Վ.Հովհաննիսյանը վճռաբեկ բողոքի պատասխանում նշել է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածով սահմանված հիմքերն իրենց բովանդակությամբ և կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է ազատությունից զրկելու հետ կապված պատժի կրումը: Բացի այդ, պատիժը կրելու վաղեմության իրավական

հիմք է համարվում այն, որ օրենքով նախատեսված ժամկետներն անցնելուց հետո կատարված կոնկրետ հանցանքը և այն կատարող անձը կորցնում են իրենց վտանգավորությունը, ինչը հիմք է ծառայում անձին պատժի կրումից ազատելու համար:

Ամփոփելով, պաշտպանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, քննարկելով մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված նորմի՝ հետադարձ ուժով կիրառելիության հարցը, իրավացիորեն փաստել է, որ այն ի տարբերություն նույն հարաբերությունները կարգավորող՝ Ա.Վաղարշակյանի կողմից արարքը կատարելու և դատավճիռը կայացնելու պահին գործող՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի, ավելի բարենպաստ է դատապարտյալի համար, ավելին, դրանով նախատեսված պայմաններում, Ա.Վաղարշակյանն անվերապահ կերպով ազատվում է պատժից:

10. Վերոշարադրյալի հիման վրա, պաշտպան Վ.Հովհաննիսյանը խնդրել է մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

11. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. *«(...) Դատարանն արձանագրում է, որ նշված դատավճռի մասին դատապարտյալ Արայիկ Վաղարշակյանը, հատուկ հանձնարարությամբ, առանց վարույթն իրականացնող մարմնին տեղյակ պահելու, չարամիտորեն խուսափելով հիմնական պատիժը կրելուց, լքել է ՀՀ տարածքը:*

Վերջինս հայտնաբերվել է միայն շուրջ 10 տարի անց Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում և 2023 թվականի մարտի 30-ից գտնվել է արգելանքի տակ: 2024 թվականի փետրվարի 13-ին Արայիկ Վաղարշակյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն և տեղափոխվել է համապատասխան ՔԿՀ:

Մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով պատժից ազատումը ենթադրում է պետության կողմից դատարանի կողմից

դատապարտված դատապարտյալի նկատմամբ քրեական պատժի իրականում կիրառելուց կամ նշանակված պատիժն ամբողջությամբ կրելուց:

(...)

Դատարանը, մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը, արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է ավելի վատթարացնող պայմաններ այն դատապարտյալների համար, ովքեր խուսափել են պատժի կրումից՝ ի կատար չածված մեղադրական դատավճռով նշանակված պատժի ժամկետին հավասար ժամանակահատվածը երկարաձգելով դրա մեկ երկրորդի չափով: Նման պայմաններում հիմնական պատժի կրումից խուսափող դատապարտյալի նկատմամբ վաղեմության ժամկետի ընթացքը վերսկսվում է նրա ձերբակալելու պահից: Այսինքն, դատապարտյալ Ա.Վաղարշակյանի պատժի կրումից խուսափելու պատճառաբանությամբ մեղադրական դատավճռով վաղեմության ժամկետը կասեցվել է, այսինքն սույն դեպքում 5 տարի 6 ամիսը չի հաշվվել, և նրա հայտնաբերումից հետո է միայն սկսվել հոսել նրա պատժի ժամկետը:

Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի՝ միջնորդությամբ մատնանշված մեկնաբանությունից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասը, որը վերաբերում է այն դատապարտյալներին, ովքեր չեն խուսափել պատժի կրումից, ավելի բարենպաստ հետևանքներ են կրելու (քննարկվող իրավակարգավորմամբ ազատվելու են պատժի կրումից, եթե մեղադրական դատավճիռը ի կատար ածված չլինի նշանակված պատժի ժամկետին հավասար ժամանակահատվածում), քան ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պատժի կրումից չարամտորեն խուսափող դատապարտյալները (քննարկվող իրավակարգավորմամբ ազատվելու են պատժի կրումից, եթե մեղադրական դատավճիռը ի կատար ածված չլինի նշանակված պատժի ժամկետին հավասար ժամանահատվածում՝ այն երկարաձգելով դրա մեկ երկրորդի չափով), ինչը տրամաբանական չէ:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետներն վերսկսվել են դատապարտյալ

Ա.Վաղարշակյանին հայտնաբերելու օրվանից, որպիսի պայմաններում պաշտպանի ներկայացրած միջնորդությունը ենթակա է մերժման (...)»[1]*:*

12. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. *(...) [Դ]իտարկելով մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված նորմը հետադարձ ուժով կիրառելիության հարցը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ այն ի տարբերություն նույն հարաբերությունները կարգավորող Արայիկ Վաղարշակյանի կողմից արարքը կատարելու և Դատավճիռը կայացնելու պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի, ավելի բարենպաստ է դատապարտյալի համար, ավելին, դրանով նախատեսված պայմաններում Արայիկ Վաղարշակյանն անվերապահ կերպով ազատվում է պատժից: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ տվյալ իրավիճակում կանտեսվեն հանցանք կատարած անձի համար տեղի ունեցած բարենպաստ օրենսդրական փոփոխությունները, և անձը կենթարկվի պատժի՝ չնայած որ պետությունը, մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցած լինելու հետևանքով անձին իմպերատիվ կերպով պատժից ազատելու վերաբերյալ նոր կարգավորում նախատեսելով, արդեն իսկ համանման դեպքերում անձին պատժի ենթարկելը չափազանց ծանր է համարել:*

(...) Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով հանցանքների համակցությամբ օրինական ուժի մեջ մտած Դատավճռով 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով նշանակված պատիժը դատապարտյալ Արայիկ Վաղարշակյանի կողմից կրելուց խուսափելու և վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված լինելու պայմաններում Դատավճռի կատարման վաղեմության բացարձակ ժամկետը լրացել է 2022 թվականի հուլիսի 4-ին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ այդ ժամկետը նաև չի ընդհատվել:

Վերոգրյալից ելնելով Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ դատապարտյալ Արայիկ Վաղարշակյանի վերաբերյալ կայացված մեղադրական

---

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 88-89:

դատավճռի վաղեմության ժամկետն անցել է, այսինքն առկա է քննարկվող կառուցակարգով նրան պատժից ազատելու հիմք:

(...)

Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը հանգում է եզրակացության, որ դատապարտյալ Արայիկ Վաղարշակյանի պաշտպան Վահե Հովհաննիսյանի հատուկ վերանայման բողոքը պետք է բավարարել՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (...) որոշումը բեկանել, դատապարտյալ Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանին ազատել թիվ ԵԱՔԴ/0174/01/11 դատավճռով նշանակված 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի եզրագա կրումից՝ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու եզրակացությամբ (...)»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի եզրակացությունն առ այն, որ դատապարտյալ Ա.Վաղարշակյանը ենթակա է ազատման իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի եզրագա կրումից՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի իրավակարգավորումների կիրառմամբ:*

14. ՀՀ գործող քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը, պատժելիությունը և քրեաիրավական այլ եզրակացությունները որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:*

2. Սույն օրենսգրքով նախատեսված հանցանքը կատարելու ժամանակ է համարվում գործողությունը կամ անգործությունը կատարելու պահը՝ անկախ եզրակացություններն առաջանալու պահից: (...)»:

Նույն օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենսդրությունը հետադարձ ուժ չունի:*

(…)

---

[2] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 49-50:

3. Եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե նշանակված պատիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետից, կամ նշանակված պատժատեսակն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված առավել խիստ պատժատեսակից: Նշված դեպքերում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնք կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն (...)»:

Ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության և քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու հիմնախնդրին Վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է իր նախադեպային որոշումների շրջանակներում՝ ընդգծելով, որ քրեական օրենքի՝ ժամանակի ընթացքում գործողության ընդհանուր կանոնը ենթադրում է, որ կատարված արարքի հանցավորությունը, դրա համար նախատեսված պատիժները և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են տվյալ արարքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Այսինքն՝ իրավասու մարմինը, հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս, պետք է ղեկավարվի հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կիրառման ենթակա օրենքը գործում է, թե ոչ:

Ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության վերը նշված ընդհանուր կանոնից միակ բացառությունը քրեական օրենքի հետադարձության կանոնն է, ինչը ենթադրում է, որ հանցավոր արարքի փաստացի կատարումից հետո ընդունված՝ հանցանք կատարած անձի համար բարենպաստ հետևանքներ առաջացնող նոր օրենքը պետք է տարածվի այդ անձի վրա[3]:

---

[3] Տե՛ս, *inter alia*, Վճռաբեկ դատարանի՝ *Վաղարշակ Գալոյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0008/15/13 որոշումը:

15. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Հանցագործության համար դատապարտված անձն ազատվում է պատիժը կրելուց, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվել հետևյալ ժամկետներում.*

(...)

3) տասը տարի՝ ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում.

(...)

3. Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե դատապարտյալը խուսափում է պատիժը կրելուց: Այդ դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ նրա՝ մեղայականով ներկայանալու պահից: Ընդ որում, մեղադրական դատավճիռը չի կարող ի կատար ածվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցագործության համար դատավճիռը կայացնելու պահից անցել է տասը տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատավճիռը կայացնելու պահից՝ քսան տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ (...)»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Հանցագործության համար դատապարտված անձը դատարանի որոշմամբ ազատվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվել դատավճռով նշանակված պատժի ժամկետին հավասար ժամանակահատվածում:*

(...)

5. Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե դատապարտյալը խուսափում է հիմնական պատիժը կրելուց: Այս դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը վերսկսվում է նրան ձերբակալելու, մեղայականով ներկայանալու կամ խուսափելը դադարեցնելու պահից: Կասեցման դեպքում սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված ժամկետը երկարաձգվում է դրա մեկ երկրորդի չափով (...)»:

Մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելը՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժից ազատելու տեսակներից մեկն է, որի գործադրման համար պարտադիր պայմանները սահմանված են քրեական օրենսդրությամբ: Մասնավորապես, վերոնշյալ ինստիտուտը գործադրելու համար, ի թիվս այլնի, անհրաժեշտ պայմաններ են

հանդիսանում մեղադրական դատավճիռն ի կատար ածելու համար քրեական օրենսդրությամբ սահմանված **վաղեմության ժամկետի լրացած լինելը,** ինչպես նաև նշված վաղեմության ժամկետի **ընդհատված կամ կասեցված չլինելը**:

Քննարկվող ինստիտուտի նախկին իրավակարգավորումները համեմատելով ՀՀ գործող քրեական օրենսգրքի իրավակարգավորումների հետ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքով ամրագրված նոր իրավակարգավորումներով օրենսդիրը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետները սահմանում է՝ հաշվի առնելով ոչ թե անձի կողմից կատարված հանցագործության տեսակը, այլ հիմք է ընդունում հանցագործության կատարման համար անհատապես անձի նկատմամբ նշանակված պատժատեսակը և պատժաժամկետը: Ավելին՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետը հավասարեցվում է նրա նկատմամբ նշանակված պատժի ժամանակահատվածին: Այլ կերպ, ներկայումս գործող իրավակարգավորումը չի որոշակիացնում և հստակ չի սահմանում քննարկվող ինստիտուտի գործադրման համար անհրաժեշտ վաղեմության ժամկետները, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, որը դրանք կապում էր բացառապես հանցատեսակի հետ:

Միաժամանակ, անդրադառնալով քննարկվող ինստիտուտի շրջանակում վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման առանձնահատկություններին, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի տրամաբանությունը կայանում է նրանում, որ դատապարտյալի կողմից հիմնական պատիժը կրելուց խուսափելու դեպքում, մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետի ընթացքը ենթակա է կասեցման մինչև դատապարտյալի ձերբակալման, մեղայականով ներկայանալու կամ խուսափելը դադարեցնելու պահը: Միայն վերոնշյալ պայմանների ի հայտ գալու դեպքում կարող է վերսկսվել դատապարտյալի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետի ընթացքի հաշվարկը՝ անկախ այն հանգամանքից, թե որքան է տևել անձի կողմից պատիժը կրելուց խուսափելու և վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված լինելու ժամանակահատվածը: Ավելին՝ կասեցման պարագայում, անձի նկատմամբ նշանակված պատժաժամկետին հավասարեցված վաղեմության ժամկետը

երկարաձգվում է նույն պատժաժամկետի մեկ երկրորդի չափով: Այսինքն՝ գործող իրավակարգավորումը պատիժը կրելուց խուսափող դատապարտյալի համար որդեգրել է առավել խիստ մոտեցում: Բացի այն, որ դատավճռի վաղեմության ժամկետի կատարման ընթացքի համար ամրագրված չեն որոշակի և հստակ ժամկետներ, այլև վերջինի կողմից պատիժը կրելուց խուսափելու դեպքում այն երկարաձգվելու է դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժաչափի մեկ երկրորդով, ընդ որում այն կարող է հոսել միայն պատժի կրումից խուսափող դատապատյալի ի հայտ գալու պահից սկսած:

Ի տարբերություն գործող իրավակարգավորման վերոշարադրյալ պայմանների, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված կարգի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ դատապարտյալի կողմից պատիժը կրելուց խուսափելու պատճառով դատավճռի կատարման վաղեմության ժամկետի կասեցված լինելու պայմաններում, մեղադրական դատավճիռը չէր կարող ի կատար ածվել համապատասխան հանցագործության տեսակով պայմանավորված և որոշակիացված ժամկետի սպառման դեպքում: Այլ կերպ՝ վաղեմության բացարձակ ժամկետները լրանալու դեպքում, այն է՝ եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար դատավճիռը կայացնելու պահից անցել է **տասը տարի,** իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար՝ **քսան տարի,** կայացված մեղադրական դատավճիռն ի կատար ածվել չէր կարող:

16. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- **2014 թվականի ապրիլի 4-ին** Ա.Վաղարշակյանի նկատմամբ կայացված՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 6-ի **դատավճիռը** և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի մարտի 3-ի **որոշումը մտել են օրինական ուժի մեջ,**

- Դատավճռի կատարման ընթացքում պարզվել է, որ դատապարտյալ Ա.Վաղարշակյանը բացակայում է բնակության վայրից, և Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ **2014 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում,**

- Ա.Վաղարշակյանը հայտնաբերվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում և **2023 թվականի մարտի 30-ից գտնվել է արգելանքի տակ:**

- 2024 թվականի փետրվարի 13-ին Ա.Վաղարշակյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն և 2024 թվականի մարտի 1-ից պատիժ է կրում «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում[4],

- 2024 թվականի փետրվարի 19-ին պաշտպան Վ.Հովհաննիսյանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով Ա.Վաղարշակյանին պատժից ազատելու վերաբերյալ,

- Առաջին ատյանի դատարանը, Ա.Վաղարշակյանին մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելու մասին միջնորդությունը մերժել է՝ իր դիրքորոշումը հիմնավորելով նրանով, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդրի կողմից նախատեսվել են ավելի վատթարացնող պայմաններ՝ այն դատապարտյալների համար, ովքեր խուսափել են պատժի կրումից և ի կատար չածված մեղադրական դատավճռով նշանակված պատժի ժամկետին հավասար ժամանակահատվածը երկարաձգվել է դրա մեկ երկրորդի չափով: Նման պայմաններում հիմնական պատժի կրումից խուսափող դատապարտյալի նկատմամբ վաղեմության ժամկետի ընթացքը վերսկսվում է նրան ձերբակալելու պահից: Այսինքն, դատապարտյալ Ա.Վաղարշակյանի պատժի կրումից խուսափելու պատճառաբանությամբ մեղադրական դատավճռով վաղեմության ժամկետը կասեցվել է, և սույն դեպքում 5 տարի 6 ամիսը չի հաշվվել, իսկ դատավճռի վաղեմության ժամկետները վերսկսվել են դատապարտյալ Ա.Վաղարշակյանին հայտնաբերելու օրվանից[5],

- Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ քննարկելով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված նորմի՝ հետադարձ ուժով կիրառելիության հարցը, փաստել է, որ այն, ի տարբերություն նույն հարաբերությունները կարգավորող՝ Ա.Վաղարշակյանի կողմից արարքը կատարելու և դատավճիռը կայացնելու պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի, ավելի բարենպաստ է դատապարտյալի համար, ավելին, դրանով նախատեսված պայմաններում Ա.Վաղարշակյանն անվերապահ կերպով ազատվում է պատժից: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատավճռով 5 (հինգ) տարի

---

[4] Տե՛ս սույն որոշման 3.1.-րդ կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

6 (վեց) ամիս ժամկետով նշանակված պատիժը դատապարտյալ Ա.Վաղարշակյանի կողմից կրելուց խուսափելու և վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված լինելու պայմաններում, դատավճռի կատարման վաղեմության բացարձակ ժամկետը լրացել է 2022 թվականի հուլիսի 4-ին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ այդ ժամկետը չի ընդհատվել: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ դատապարտյալ Ա.Վաղարշակյանի վերաբերյալ կայացված մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցել է, այսինքն առկա է քննարկվող կառուցակարգով նրան պատժից ազատելու հիմք[6]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները դիտարկելով սույն որոշմամբ մեջբերված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված նորմի՝ հետադարձ ուժով կիրառելիության և դատապարտյալի համար ավելի բարենպաստ լինելու վերաբերյալ, չի կարող հիմնավոր համարվել՝ իրավակարգավորման սխալ մեկնաբանման պատճառաբանությամբ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ա.Վաղարշակյանը շուրջ **10 տարի խուսափել է** իր նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքների համար (որոնք իրենց բնույթով **հանդիսանում են ծանր հանցագործություններ**) օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատժի կրումից, **ինչի արդյունքում վերջինիս նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի ի կատար ածման վաղեմության ժամկետը եղել է կասեցված:**

Տվյալ դեպքում, որպես ելակետ ընդունելով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ սույն որոշմամբ կատարված վերլուծությունները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **գործող իրավակարգավորման պայմաններում**, երբ դատապարտյալը խուսափում է իր նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատիժը կրելուց, տվյալ մեղադրական դատավճռի ի կատար ածման վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է՝ երկարաձգվելով վերջինիս

[6] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

պատժաժամկետի մեկ երկրորդի չափով և ենթակա չէ վերսկսման մինչև դատապարտյալի ի հայտ գալը: Այսինքն, կասեցված վաղեմության ժամկետի պայմաններում, **նախատեսված չեն օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումը բացառող բացարձակ ժամկետներ, ավելին՝ վաղեմության կասեցված ժամկետի վերսկսման դեպքում այն երկարաձգվում է՝** փաստացի վատթարացնելով պատժից խուսափող դատապարտյալի վիճակը: Մինչդեռ նախկին իրավակարգավորումը կասեցված վաղեմության ժամկետի դեպքում **բացառում է մեղադրական դատավճռի կատարումը, երբ անցել են պատժատեսակով պայմանավորված և բացարձակ համարվող հստակ ժամկետները՝ անկախ դատապարտյալի ի հայտ գալու հանգամանքից:**

Վերոշարադրյալից բխում է, որ սույն դեպքում Ա.Վաղարշակյանի կողմից հանցանքի կատարման պահին գործող ՀՀ նախկին քրեական օրենսգրքով մեղադրական դատավճռի կատարումը բացառող՝ ծանր հանցագործության համար սահմանված բացարձակ ժամկետը կազմում էր 20 տարի: Մինչդեռ ՀՀ գործող քրեական օրենսգրքի տրամաբանությունից բխում է, որ Ա.Վաղարշակյանի նկատմամբ քննարկված վաղեմության ժամկետը բացառող որոշակիացված ժամկետը բացակայում է, ավելին, նրա նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված 5 տարի 6 ամիսը կրելուց խուսափելու պատճառով մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետը երկարաձգվում է ևս 2 տարի 9 ամսով, որն Ա.Վաղարշակյանի հետախուզման մեջ գտնվելու ընթացքում փաստացի չի հոսել:

Ա.Վաղարշակյանի կողմից պատժի կրումից խուսափելը փաստացի դադարեցվել է 2023 թվականի մարտի 30-ից՝ նրան արգելանքի վերցնելու պահից, որպիսի պայմաններում մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետը, որը, ըստ գործող իրավակարգավորումների կազմում է 8 տարի 3 ամիս՝ վերսկսել է նրան արգելանքի տակ վերցնելու վերոնշյալ պահից:

18. Հիմք ընդունելով նախորդ կետում կատարված իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ հետևության, առ այն, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդրի կողմից նախատեսվել են ավելի վատթարացնող պայմաններ այն դատապարտյալների համար, ովքեր խուսափել են պատժի կրումից, քանի որ

կասեցված վաղեմության ժամկետը կարող է վերսկսվել միայն դատապարտյալի հայտնաբերման պահից և այն երկարաձգվում է ի կատար չածված մեղադրական դատավճռով նշանակված պատժի ժամկետի մեկ երկրորդի չափով:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ դատապարտյալ Ա.Վաղարշակյանը ենթակա է ազատման իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի հետագա կրումից՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի իրավակարգավորումների կիրառմամբ, հիմնավոր չէ:

19. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում բողոքաբերի՝ սույն որոշման 7.2-րդ կետում մատնանշված այն փաստարկին, որ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հիմքով պատժից ազատելու իրավակարգավորումները դիտարկվում են որպես անձի վիճակն այլ կերպ բարելավող, քանզի, ինչպես բխում է սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, վաղեմության ժամկետների կասեցման մասով կատարված օրենսդրական փոփոխությունները վատթարացնում են անձի վիճակը:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, դատապարտյալ Ա.Վաղարշակյանին մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով դատավճռով նշանակված պատժի հետագա կրումից ազատելու հարցը որոշելիս, թույլ է տվել նյութական օրենքի խախտում, այն է՝ կիրառել է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածը, որը ենթակա չէր կիրառման և չի կիրառել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը, որը սույն վարույթով ենթակա էր կիրառման, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Վաղարշակյանին մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով դատավճռով նշանակված պատժի հետագա կրումից ազատելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է և հիմնավորված, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի իրավակարգավորումների կիրառմամբ դատապարտյալի պաշտպանի միջնորդությունը քննության առնելով՝ Առաջին ատյանի դատարանը

պահպանել է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածների պահանջները, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 27-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից ու ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ 361-րդ, 363-րդ, 385-րդ ու 387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Դատապարտյալ Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 27-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ